



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

05.01.2023թ.

ք. Երևան

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Պետրոսյանս, ուսումնասիրելով հայցվոր «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Լևոն Օհանյանի կողմից ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Հայցվոր «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Լևոն Օհանյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 21.10.2022թ-ի կայացված որոշումը (գրությունը)՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի նկատմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցը կիրառելու մասով անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, որը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Սաֆարյանի 22.11.2022թ. որոշմամբ վերադարձվել էր:

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմումը կրկին դատարան է ներկայացրել եռօրյա ժամկետում՝ 15.12.2022 թվականին, որը նույն օրը մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Էդ.Ամալյանին: Այնուհետև, դատավոր Էդ.Ամալյանի անաշխատունակության մեջ գտնվելու պատճառով թիվ ԵԴ/59558/02/22 դատական գործով հայցադիմումը 27.12.2022թ. վերաբաշխվել է դատավոր Ա.Պետրոսյանին, իսկ դատավորի աշխատակազմին է հանձնվել 30.12.2022 թվականին:

Հայցվորի ներկայացուցիչ Լ.Օհանյանը հայցադիմումով միաժամանակ միջնորդել է գործը քննել դատական նիստում:

Հայցվորի ներկայացուցչի կողմից պահպանվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121, 122 հոդվածներով առաջադրվող պահանջները:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում: Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցվորի ներկայացուցիչ Լ.Օհանյանը հայցադիմումով միջնորդել է գործը քննել դատական նիստում, ուստի Դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասը, գտնում է, որ քիվ ԵԴ/59558/02/22 քաղաքացիական գործով պետք է հրավիրել դատական նիստ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Սույն գործով հրավիրել դատական նիստ 2023թ. փետրվարի 09-ին ժամը 17:15-ին:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝



Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ